

ԿԱՐԾԻՔ

Նաիրա Արայի Մանվելյանի «Քիմիայի արտադասարանական պարապմունքների կազմակերպման եվ իրականացման եղանակները հիմնական դպրոցում» թեմայով ատենախոսության մասին՝ ներկայացված ԺԳ. 00. 02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (քիմիա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների գիտական աստիճանի հայցմանը:

Կրթության թվայնացումը այսօր նոր խնդիրներ է առաջադրել հանրակրթական դպրոցին սովորողների լրացուցիչ կրթության, նրանց ազատ ժամանակի կազմակերպման, բնագիտամաթեմատիկական առարկաների նկատմամբ հետաքրքրությունների խթանման, գիտելիքների, կարողունակությունների, ինչպես նաև 21-րդ դարի հմտությունների զարգացման ուղղությամբ:

Այս տեսանկյունից Նաիրա Արայի Մանվելյանի ատենախոսության հիմնախնդիրը արդիական է և կրթության ռազմավարական խնդիրների լուծման առումով խիստ նպատակային:

Հետազոտության հիմնախնդիրը դիտարկվում է կրթության անձնակազմնորոշիչ հարացույցի համատեքստում:

Ատենախոսությունը կառուցված է ներածությունից, միմյանց լրացնող երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից:

Ներածության մեջ հիմնավորված է հետազոտության արդիականությունը, ներկայացված են հետազոտության բաղադրիչները՝ օբյեկտը, առարկան, նպատակը, հետազոտության խնդիրները, առաջադիր վարկածը, մեթոդները, մեթոդաբանական հիմքերը, գիտատեսական ու գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող հիմնադրույթները, որոնք բովանդակային առումով համապատասխանում են և տրամաբանորեն հիմնավորված արտացոլված են եզրակացությունների մեջ:

Քննարկվող ատենախոսական հետազոտության նպատակը հանրակրթական հիմնական դպրոցում քիմիայի արտադասարանական պարապմունքների

արդյունավետ կազմակերպման մեթոդական համակարգի մոդելի և ծրագրի մշակումն ու փորձարարական հիմնավորումն է:

Հետազոտության արժանահավատությունն ու հիմնավորվածությունն ապահովված են նրա տեսական-մեթոդաբանական հիմքը կազմող փիլիսոփայական և հոգեբանամանկավարժական արդի հայեցակարգերի, մասնագիտական-մեթոդական գրականության համալիր վերլուծությամբ, փորձարարական հետազոտության արդյունքներով:

Ատենախոսության առաջին գլխում վերլուծության են ենթարկված հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմող տեսական հայեցակարգերը: Ատենախոսը հանգամանալից ու նորովի է մեկնաբանել «արտասուսումնական գործունեություն» և «արտադասարանական պարապմունք» հասկացությունները՝ վեր հանելով դրանց սկզբունքային տարբերություններն ու կիրառական ոլորտի մանկավարժական առանձնահատկությունները:

Ներկայացված են ատենախոսի կողմից բացահայտված քիմիայի արտադասարանական պարապմունքների կազմակերպման առանձնահատկությունները, օրինաչափությունները և սկզբունքները, տեսակները, կազմակերպման ձևերն ու մանկավարժական պայմանները:

Այս տեսանկյունից առանձնակի արժեք է ներկայացնում գիտական գրականության մեջ առկա զանգվածային արտադասարանական պարապմունքների թվարկված տեսակներին ատենախոսի կողմից ավելացված քիմիայից սովորողների խմբային նախագծային և հետազոտական աշխատանքները և ամառային դպրոցը, բացահայտված և գիտականորեն հիմնավորված են քիմիայի արտադասարանական պարապմունքների արդյունավետ կազմակերպման առանձնահատկությունները, սկզբունքները, օրինաչափությունները, ձևերն ու ուղիները:

Մեթոդաբանական առումով առաջին գլխի վերլուծություններն առանձնակի արժեք են ստանում ոչ միայն արտադասարանական պարապմունքների արդյունավետ կազմակերպման, այլև սովորողների շրջանում քիմիա առարկայի հանդեպ հետաքրքրության խթանման տեսանկյունից: Հեղինակին հաջողվել է հստակեցնել այն ուղիները, որոնք նպաստում են աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը և 21-

րդ դարի առանցքային հատությունների ձևավորմանը:

Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակը գիտափորձի միջոցով հիմնավորել է քիմիայի արտադասարանական պարապմունքների արդյունավետության համար մշակված մեթոդական համակարգի մոդելը: Վերջինս ներդաշնակորեն ներառում է հայեցակարգային, կազմակերպական, տեխնոլոգիական և վերջնարդյունքային բաղադրիչները՝ համակցված ինքնուրույն առաջադրանքների ու օլիմպիական խնդիրների համակարգով:

Իրականացված հետազոտության արդյունքում ատենախոսը հանգել է այն գիտական համոզմանը, որ սովորողների հետազոտական և նախաամասնագիտական կարողությունների զարգացման համար անհրաժեշտ է կիրառել ժամանակակից փոխներգործուն մեթոդների ու թվային տեխնոլոգիաների համալիր միջոցներ: Այս համատեքստում առանձնակի արժեք է ներկայացնում S2S միջոցների կիրառման մշակված մոդելը, որը բխում է կրթության թվայնացման արդի ռազմավարական պահանջներից:

Ատենախոսության գիտատեսական և գործնական նշանակությունը կայանում է հենց այս համակարգված մոտեցման մեջ, ինչը որակական նոր խոսք է արտադասարանական պարապմունքների կազմակերպման հիմնախնդրի լուծման գործում»

Առանձնակի գիտամեթոդական արժեք են ներկայացնում ատենախոսի կողմից առաջարկվող տեխնոլոգիաներն ու թվային միջոցները, ինչպես նաև փորձարարական փուլում իրականացված նախագծային և հետազոտական աշխատանքների նմուշօրինակները:

Հետազոտությունն ամփոփվում է մշակված մեթոդական մոդելի արդյունավետության փորձարարական հիմնավորմամբ: Ստացված տվյալները հավաստում են հետազոտության առաջադրված վարկածի ստույգությունը՝ ապացուցելով փոխներգործուն մեթոդների, համագործակցային ու նախագծային տեխնոլոգիաների կիրառման մանկավարժական նպատակահարմարությունը:

Հետաքրքիր և արդյունավետ է նաև սովորողների հետազոտական կարողությունների զարգացման մակարդակի որոշման մեթոդիկան, որը ղիտարկվում է

թե՛ տեղեկատվական, թե՛ դիդակտիկական տեղեկություններից: Փորձարարական աշխատանքների արդյունքները լիովին համապատասխանում են հետազոտության տրամաբանությանը. կիրառված հարցաթերթիկներն ընդգրկուն են, իսկ ստացված պատասխանները ենթարկվել են հանգամանալից իմաստային և բովանդակային վերլուծության:

Տեսական և գործնական հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա հեղինակի կողմից հստակ առանձնացվել են սովորողների քիմիական գիտելիքների յուրացումը և նախագծային-հետազոտական կարողությունների ձևավորվածությունը բնութագրող չափանիշները, ցուցանիշներն ու մակարդակները: Աշխատանքում ներկայացված տրամագրերը հավաստում են մշակված մեթոդական համակարգի ներդրման շնորհիվ սովորողների հետազոտական հմտությունների զարգացման դրական դինամիկան, ինչն էլ հիմնավորում է առաջարկվող մեթոդիկայի մանկավարժական արդյունավետությունը:

Հիմնախնդրի շրջանակում ստացվել են գիտամեթոդական հիմնավորված արդյունքներ, որոնք նոր մոտեցումներ են քիմիայի արտադասարանական պարապմունքների կազմակերպման և դրանցում սովորողների կարողունակությունների զարգացման գործում: Ատենախոսության մեջ ակնհայտ են հեղինակի հետազոտական կարողություններն ու անձնական ներդրումը, հատկապես՝ հետազոտական առաջադրանքների և օլիմպիական խնդիրների ստեղծման, ինչպես նաև փոխներգործուն մեթոդների ու թվային տեխնոլոգիաների կիրառելիության հիմնավորման հարցում:

Հետազոտության արդյունքների արժանահավատությունը փաստվում է նաև նրանով, որ մշակված մոդելը տևական ժամանակ կիրառվել է հանրակրթական դպրոցում և արձանագրել արդյունավետության բարձր ցուցանիշներ: Ատենախոսությունն ամբողջական, ինքնուրույն և արդիական հետազոտություն է, որն արտացոլում է հեղինակի մասնագիտական խոր գիտելիքներն ու գիտահետազոտական աշխատանք կատարելու հմտությունները:

Աշխատանքում լիարժեքորեն պահպանված են թեկնածուական ատենախոսության բովանդակային, կառուցվածքային և լեզվաոճական պահանջները,

իսկ տպագրված հոդվածները լիովին արտացոլում են հետազոտության բովանդակությունը

Այնուհանդերձ ատենախոսության վերաբերյալ ունենք մի քանի նկատառում

1. Հեղինակը, որպես գիտական նորույթ, իրավացիորեն նշում է «արտադասարանական» և «արտասուսումնական» հասկացությունների տարբերակման անհրաժեշտությունը: Թեև Հավելված 1-ում զետեղված հետազոտական նախագծերն իրենց բնույթով արդեն իսկ հակվում են դեպի արտասուսումնական ձևաչափ (օրինակ՝ սննդամթերքի որակի որոշումը, էկոլոգիական մոնիտորինգը), սակայն ատենախոսության հիմնական տեսական տեքստում այդ տարբերակումը երբեմն բավարար չափով չի ընդգծվում: Ցանկալի կլիներ տեսնել ավելի որոշակի սահմանազատում այս երկու գործունեությունների միջև:

2. Հավելված 1-ում ներկայացված «Քիմիայի 1-ին տարվա գործունեության ծրագիրը» և դրանում ներառված նախագծային աշխատանքների օրինակները կշահեն, եթե ուղեկցվեն հստակ սահմանված նպատակներով և ակնկալվող վերջնարդյունքներով: Մա հնարավորություն կտար ավելի օբյեկտիվորեն գնահատել առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետությունը սովորողների թե՛ տեսական գիտելիքների, թե՛ գործնական կարողունակությունների ձևավորման հարցում:


3. Ատենախոսության մեջ ներկայացված «Քիմիայի 1-ին տարվա գործունեության ծրագիրը» ենթադրում է տարբեր դասարանների սովորողների ընդգրկվածություն մեկ խմբակում: Ցանկալի կլիներ, որ հեղինակը ներկայացներ տարբերակված մոտեցումների կիրառման մեթոդիկան, որը թույլ կտար նույն ծրագրի շրջանակներում արդյունավետորեն կազմակերպել տարբեր տարիքային խմբերի և գիտելիքների տարբեր մակարդակ ունեցող աշակերտների համատեղ աշխատանքը:

4. Որոշ էջերում նկատվում են տեխնիկական վրիպակներ և տառասխալներ (օրինակ՝ «հիմսախնդիր», «հիմսական»), որոնք ցանկալի է ուղղել վերջնական տարբերակում :

Այդուհանդերձ, արված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը և կիրառական նշանակությունը: Հետազոտությունը կատարված է պատշաճ մակարդակով, իսկ ստացված արդյունքները հավաստի են:

Եզրակացություն

Նաիրա Արայի Մանվելյանի «Քիմիայի արտադասարանական պարապմունքների կազմակերպման եվ իրականացման եղանակները հիմնական դպրոցում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանների շնորհման կարգի 7-րդ կետի պահանջներին և ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ԺԳ. 00. 02. «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (քիմիա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝  ք.գ.դ., դոցենտ Լուիզա Ռազմիկի Վարդանյան

Լ.Ռ. Վարդանյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԳՂՀ ՄՌԿ բաժնի ղեկավար



Միրզոյան

16.02.2026թ.